


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. սեպտեմբերին


/վերլուծություն/

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12955 գործարքներ, որոնց քանակը 2012թ. օգոստոսի համեմատ նվազել է 18.4%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 15.3%-ով:

2012թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3632 օտարման գործարքների 74.6%-ը կազմել են առուվաճառքները, 24.5%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. սեպտեմբերին, 2012թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 22.5%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 17.7%-ով:

2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 55.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. սեպտեմբերին, 2012թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 30.4%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 21.2%-ով:

2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2012թ.	օգոստոս 2012թ.
Կենտրոն	436200	418200	416800
Արաբկիր	337900	346100	343700
Քանաքեռ-Զեյթուն	265600	274200	272500
Նոր-Նորք	222100	237000	235000
Ավան	250500	246550	245050
Էրեբունի	232100	240000	239600
Շենգավիթ	228900	243500	240600
Դավթաշեն	256300	266200	265000
Աջափնյակ	222800	234000	231400
Մալաթիա-Սեբաստիա	224500	231300	229800
Նուբարաշեն	144200	141000	140500
Միջինը Երևանում	256500	261600	260000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.6%-ով:

2012թ. սեպտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 408 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. օգոստոսի համեմատ աճել է 0.5%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 1.7%-ով:

2012թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2012թ.	օգոստոս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	128400	113600	113500
	Ապարան	52700	50000	49100
	Թալին	66100	61200	61100
Արարատ	Արտաշատ	98100	92700	92500
	Մասիս	109800	110050	109100
	Վեդի	91200	97050	97050
	Արարատ	79600	74200	74100
Արմավիր	Վաղարշապատ	138900	153200	153200

	Արմավիր	113300	119100	118000
	Մեծամոր	77600	86500	86200
Գեղարքունիք	Սևան	90000	99000	99000
	Գավառ	54800	53600	53600
	Մարտունի	96400	107200	106500
	Վարդենիս	34600	38000	38000
	Ճամբարակ	25500	23050	23050
	Վանաձոր	88200	87200	87000
Լոռի	Ստեփանավան	74500	74500	74100
	Սպիտակ	96800	99800	99800
	Ալավերդի	36800	51600	51600
	Տաշիր	48200	43800	43500
	Թումանյան	13300	11000	11000
	Շամլուղ	9400	8000	8000
	Ախթալա	22100	19800	19500
Կոտայք	Աբովյան	140300	153100	153000
	Նոր Հաճն	124200	128500	128200
	Բյուրեղավան	107400	107100	107100
	Եղվարդ	112200	109300	108500
	Հրազդան	59000	60200	60000
	Ծաղկաձոր	196200	292500	292500
	Չարենցավան	71800	84000	84000
Շիրակ	Գյումրի	105500	108900	108900
	Արթիկ	63200	64800	64300
	Մարալիկ	37000	37300	37300
Սյունիք	Գորիս	120700	115300	115000
	Կապան	98200	90200	90100
	Սիսիան	89000	84000	83100
	Մեղրի	75200	71050	70000
	Ագարակ	44400	43800	43800
	Քաջարան	70700	94300	94100
	Դաստակերտ	8000.0	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	79100	87000	86100
	Եղեգնաձոր	106000	117700	117500
	Ջերմուկ	116200	104100	103800
Տավուշ	Դիլիջան	102400	106000	104000
	Իջևան	118600	114050	114000
	Բերդ	52000	52600	52300
	Նոյեմբերյան	43300	43300	43000
	Այրում	31500	25000	25000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 357 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 97, մարզերում միասին վերցրած՝ 260: 2012թ. սեպտեմբերին, 2012թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.1%-ով, ընդ որում Երևանում՝ 23.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.1%-ով: 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 27.3%-ով, ընդ որում Երևանում՝ 27.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 27.2%-ով:

2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2012թ.	օգոստոս 2012թ.
Կենտրոն	452100	466800	464500
Արաբկիր	363500	374500	370500
Քանաքեռ Զեյթուն	275600	284100	282000
Նորք Մարաշ	295200	310700	308000
Ավան	253800	263800	261500
Էրեբունի	238400	230000	229300
Շենգավիթ	237000	248000	246200
Դավթաշեն	268400	266100	264000
Աջափնյակ	236000	241000	240000
Մալաթիա Սեբաստիա	233400	230300	229500
Նուբարաշեն	150100	144500	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	273000	278200	276400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. օգոստոսի համեմատ աճել են են 0.7%:

2012թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2011թ.	սեպտեմբեր 2012թ.	օգոստոս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	133400	134800	134500
	Ապարան	55100	54100	53100
	Թալին	67000	68650	68650
Արարատ	Արտաշատ	104800	98600	98300
	Մասիս	115300	112100	111500
	Վեդի	95300	100200	100200
Արմավիր	Արարատ	85300	87300	87250
	Վաղարշապատ	162200	152300	152200
	Արմավիր	117800	105200	104200
Գեղարքունիք	Սևան	94000	94200	94100
	Գավառ	56900	52300	52300
	Մարտունի	97100	94300	93000
	Վարդենիս	38300	34000	34000
	Ճամբարակ	28400	26200	25900
Լոռի	Վանաձոր	97100	98200	98100
	Ստեփանավան	77500	87600	87600
	Սպիտակ	106200	113600	113500
	Ալավերդի	38200	46050	46600
	Տաշիր	52000	51100	50200
	Թումանյան	13900	12000	12000

	Շամլուղ	11000	13200	13200
	Ախթալա	23400	29600	29400
Կոտայք	Աբովյան	146400	154700	154600
	Նոր Հաճն	132000	129800	129800
	Բյուրեղավան	109000	120000	120000
	Եղվարդ	118200	116100	115350
	Հրազդան	63100	79800	79000
	Ծաղկաձոր	320500	305000	305000
	Չարենցավան	75000	82300	82200
Շիրակի	Գյումրի	117200	117400	117400
	Արթիկ	66900	61200	61000
	Մարալիկ	38000	49500	49000
Սյունիք	Գորիս	128900	127000	127000
	Կապան	102000	98300	98300
	Սիսիան	92400	90000	89600
	Մեղրի	76200	77000	76300
	Ագարակ	46200	46300	46200
	Դաստակերտ	10500	11610	11600
Վայոց Ձոր	Վայք	82200	84800	84100
	Եղեգնաձոր	114000	113300	113000
	Ջերմուկ	119400	122850	122100
Տավուշ	Դիլիջան	108200	109600	108300
	Իջևան	128400	122000	121200
	Բերդ	54800	58000	57800
	Նոյեմբերյան	46000	46100	46100
	Այրում	33300	34600	34300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1132 միավոր /649.09 հա/ հողեր, որից Երևանում՝ 94 միավոր /40.80 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 557 միավոր /569.78 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.39 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 401 միավոր /34.30 հա/, որից Երևանում՝ 44 միավոր /2.49 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 160 միավոր /43.11 հա/, որից Երևանում՝ 49 միավոր /37.92 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 5 միավոր /0.52 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 8 միավոր /1.35 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.04 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 955 միավորի /571.98 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 76 միավոր /38.93 հա/, նվիրատվության գործարքներ՝ 160 միավորի /76.26 հա/, որից Երևանում՝ 17 միավոր /1.87 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /0.85 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.01 հա/:

Հանրապետությունում 2012թ. սեպտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 25.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական

նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 37.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 6.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 68.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 160.04 հա, որից 155.93 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.4%-ը կամ 195 գործարքներ /109.48 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 25 միավոր /3.29 հա/, իսկ 78.4%-ը կամ 749 միավորը /371.96 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 51 միավոր /35.63 հա/: 2012թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք /90.54 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	25	3.29	1	0.39	0	0.00	30	1.70	20	33.54
Արագածոտն	16	7.29	0	0.00	1	0.17	4	0.03	59	71.67	0	0.00	36	4.34	3	0.02
Արարատ	6	16.06	0	0.00	4	0.21	1	0.21	57	49.86	0	0.00	41	3.50	7	0.20
Արմավիր	8	31.80	1	0.02	0	0.00	8	0.05	52	80.37	0	0.00	61	6.24	0	0.00
Գեղարքունիք	1	0.15	0	0.00	16	1.16	3	0.22	85	25.43	0	0.00	5	0.71	3	0.13
Լոռի	3	0.43	1	0.19	5	0.20	11	0.43	19	8.28	0	0.00	14	1.16	5	0.04
Կոտայք	20	40.71	1	0.04	12	0.41	11	0.48	70	26.44	0	0.00	78	5.37	10	0.30
Շիրակ	0	0.00	0	0.00	7	0.24	7	0.12	30	23.24	0	0.00	3	0.24	4	0.40
Սյունիք	2	4.07	0	0.00	2	0.02	5	0.16	14	17.26	2	0.27	3	0.32	1	0.02
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.01	5	1.57	0	0.00	7	1.02	2	0.10
Տավուշ	0	0.00	0	0.00	2	0.78	10	0.54	10	5.36	0	0.00	5	1.04	2	0.91
Ընդամենը	56	100.51	3	0.25	49	3.19	87	5.54	402	309.87	2	0.27	283	25.64	57	35.66

Ստորև ներկայացվում է 2012թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	12	2.28	0	0.00	0	0.00	12	2.28	13	1.01	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.01
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	21	7.49	16	7.29	0	0.00	1	0.17	4	0.03

Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	16.48	6	16.06	0	0.00	4	0.21	1	0.21
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	4.67	6	4.60	1	0.02	0	0.00	8	0.05
Գեղարքունիք	2	0.012	0	0.00	1	0.01	1	0.002	18	1.52	1	0.15	0	0.00	15	1.15	2	0.22
Լոռի	5	0.03	0	0.00	0	0.00	5	0.03	15	1.22	3	0.43	1	0.19	5	0.20	6	0.40
Կոտայք	3	0.11	0	0.00	1	0.04	2	0.07	38	37.56	17	36.73	1	0.04	11	0.38	9	0.41
Շիրակ	10	0.16	0	0.00	4	0.10	6	0.06	4	0.20	0	0.00	0	0.00	3	0.14	1	0.06
Սյունիք	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	7	3.404	1	3.24	0	0.00	1	0.004	5	0.16
Վայոց Ձոր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	1	0.004	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.004
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	1.32	0	0.00	0	0.00	2	0.78	10	0.54
Ընդամենը	34	2.61	0	0.00	7	0.16	27	2.45	155	74.88	50	68.50	3	0.25	42	3.03	60	3.09

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /32.02 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. սեպտեմբերին, 2011թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.1%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 6.5 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 10.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 28.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 20.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 18.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 72.7%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	15	5.28	210.0	941.4	497.7	39	21.57	365.0	12000.0	3827.7
Ապարան								86.5	2727.3	705.0
Թալին	1	2.01	48.5	48.5	48.5	13	43.01	93.6	5494.5	616.2
Ծաղկահովիտ						7	7.09	79.5	1000.0	248.5
Արարատի մարզ										
Արտաշատ	2	3.62	73.7	83.7	78.7	24	17.89	335.1	10833.3	2755.8
Մասիս	4	12.44	63.4	2997.5	1015.4	9	3.39	200.0	11904.8	3115.8
Վեդի						23	28.08	207.0	10795.1	1891.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	4.60	521.5	1059.3	969.6	29	23.56	294.3	9090.0	1515.3
Բաղրամյան						5	39.00	90.6	2561.1	752.3
Վաղարշապատ						18	17.80	444.4	11764.7	2575.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.15	121.9	121.9	121.9	74	14.99	199.8	1875.0	405.3
Ճամբարակ						8	3.70	60.5	953.3	342.5
Մարտունի								51.1	2850.0	733.6
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						3	6.74	41.2	2575.1	393.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.12	1095.7	1095.7	1095.7	2	1.02	170.4	6424.2	638.5
Գուգարք	2	0.31	1255.1	1439.2	1347.2	1	0.20	234.6	6065.9	751.3

Սպիտակ						10	1.84	250.0	5555.5	732.3
Ստեփանավան						3	2.58	90.6	1686.6	300.0
Տաշիր								45.3	1384.4	145.3
Կոտայքի մարզ										
Արուլյան	7	4.04	246.7	3855.1	903.5	20	6.78	279.3	11942.7	4668.3
Եղվարդ	10	32.68	81.7	4721.8	2058.9	38	9.09	174.4	11971.8	2696.0
Հրազդան						12	10.56	130.5	10256.4	1816.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						14	7.45	252.0	1693.1	600.0
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						9	9.91	110.6	546.9	372.0
Աշոցք						2	0.94	58.5	215.8	126.1
Արթիկ						5	4.94	79.4	1428.6	387.2
Սյունիքի մարզ										
Գորիս	1	3.24	59.4	59.4	59.4	6	11.69	92.6	1023.2	700.0
Կապան								120.0	841.6	347.3
Մեղրի						2	0.53	193.0	3000.0	725.5
Սիսիան						6	5.04	46.3	1977.4	520.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	0.80	125.0	10000.0	1875.0
Վայք						2	0.67	58.8	1430.7	615.5
Տավուշի մարզ										
Բերդ						5	0.74	213.3	3783.8	675.3
Իջևան						3	3.80	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան						2	0.83	46.7	7368.4	850.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. սեպտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						31	35532.0	130.7	22200.0	2573.0
Ապարան	1	1744.0	378.4	378.4	378.4	4	6670.0	124.1	609.6	385.0
Թային								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1000.0	367.0	367.0	367.0	12	10948.4	173.9	7140.3	894.0
Մասիս	3	1080.0	832.7	850.0	839.5	19	12110.0	187.5	25000.0	1206.0
Վեդի						8	10150.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						27	30997.8	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						3	3400.0	100.0	833.3	239.1
Վաղարշապատ						30	26984.0	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	10	10060.0	116.9	123.1	118.1			186.6	1084.3	665.2
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	1	1200.0	219.8	219.8	219.8	4	3842.0	119.3	5000.0	278.8

Սևան								240.0	3110.4	307.5
Վարդենիս	4	256.8	1100.0	1150.0	1137.5	1	3217.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2110.0	114.3	1388.9	216.2
Գուգարք	1	300.0	4976.4	4976.4	4976.4	5	2400.0	77.9	14083.3	1120.0
Սալիտակ	1	1516.5	245.2	245.2	245.2	6	6531.5	104.9	1348.3	205.4
Ստեփանավան						1	600.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	3	134.0	351.9	410.0	387.3			45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	2196.3	410.0	5205.4	3186.7	41	26935.4	264.5	35353.5	1964.1
Եղվարդ	2	1600.0	1900.0	3102.5	2501.3	33	23542.8	173.6	27000.0	2851.3
Հրազդան						3	2711.9	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	594.0	581.0	581.0	581.0	2	1205.2	113.6	18750.0	332.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	402.1	467.4	434.8			67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						1	1150.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2449.0	112.2	1700.0	367.6
Կապան	1	42.0	1787.1	1787.1	1787.1			67.9	2638.9	300.0
Մեղրի						1	720.0	68.5	632.9	198.2
Սիսիան								123.5	875.0	197.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	7275.0	96.7	7659.6	500.0
Վայք						1	2895.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	111.0
Իջևան	2	7843.0	3000.0	3000.0	3000.0	5	10390.0	74.1	14423.1	515.2
Նոյեմբերյան								125.0	1948.1	221.0

2012թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 704 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 63.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. սեպտեմբերին, 2012թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.3%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 21.2%-ով:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 33 բնակարանների, 77 անհատական բնակելի տների, 286 հասարակական, 93 արտադրական նշանակության օբյեկտների, 195 հողերի, 3 այգետնակի և 17 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր՝ 0.60 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 53.8%-ով: 2012թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 2735.42 հա հողերից 1.20 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2734.21 հա հողերից 2719.42 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 11.70 հա արդյունաբերական օբյեկտների, 0.62 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 2551.05 հա, որից 2550.42 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1584 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների

քանակի 12.2%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. օգոստոսի համեմատ, նվազել է 16.1%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 21.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.8%/, առանձնատների /24.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.6%/ և հողերի /6.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 748 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. օգոստոսի համեմատ, նվազել է 28.3%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 21.0%-ով:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 150.73 հա հողեր, որից 74.02 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 48.1%-ը կամ 72.51 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 38.34 հա, որից 38.05 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 104 գործարքներ, որից 67-ը՝ Երևանում: 2012թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 35.8%-ով, ընդ որում Երևանում՝ 40.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 26.0%-ով: 2011թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 48.5%-ով, ընդ որում Երևանում՝ 53.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 36.2%-ով:

2012թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1790 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. օգոստոսի համեմատ նվազել է 25.0%-ով, իսկ 2011թ. սեպտեմբերի համեմատ՝ 31.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /28.7%/:

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե